



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11  
էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 006

« 07 » Մայիսի 2013թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Սևանա լճի հետ կապված ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից վերջին 10 տարիների ընթացքում իրականացված ծրագրերի մասին /ըստ տարիների/.

1. Ծրագրերի անվանումներն ըստ տարիների
2. Ծրագրերն իրականացնող կողմը /երը/, Ծրագրի ղեկավարը, Համատեղ իրականացնող կողմը /երը/
3. Ծրագրերի նպատակները /ըստ տարիների/
4. Ստացված կամ ակնկալվող արդյունքները /ըստ ծրագրերի և ըստ տարիների//
5. Ծրագրերի բյուջեները /պետական ներդրման չափը ըստ ծրագրերի և տարիների, այլ աղբյուրներից ներդրման չափը/
6. Կարգավիճակը /ավարտված, ընթացքի մեջ, ընդհատված-պատճառները, ըստ տարիների /
7. Ստացված փաստացի արդյունքները /ըստ ծրագրերի և ըստ տարիների /

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կից կարող եք տեսնել նաև աղյուսակը /1 էջ/, ըստ որի, եթե նպատակահարմար է, կարող եք ներկայացնել տեղեկատվությունը:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան

